

«Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ քեզի, թե երբ դուն պատանի էիր, ինքնիրմէդ զօրի կը կապէիր ու կ'երթայիր ուր որ ուզէիր. բայց երբ ծերանաս, չեռքերդ վեր պիտի բռնես եւ ուրիշը զօրիդ պիտի կապէ ու պիտի փանի ուր չես ուզեր»:

Աւետարան ըստ Յովհաննոս 21, 18:

**ՓՈԽԱՏԵՂՈՒՄՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ\***

Հոկտեմբերի 16-ին Գորիսում՝ Սփյուռքի լրատվամիջոցների ներկայացուցիչների առջև ՀՀ նախագահ **Սերժ Սարգսյանի** ելույթում ներկայացված պատմագիտական փաստաթղթերի դեմ Ադրբեջանի նախագահի աշխատակազմի ղեկավար **Ռամիզ Մեհթիևի** հրապարակած **պաշտոնական պատասխանի**<sup>1</sup> նկատմամբ վերջին երկու ամիսներին Հայաստանի պատմաբանների դրսևորած անտարբերությունը վկայում է, որ այսպես շարունակելու պարագայում կարող ենք տանուլ տալ ոչ միայն քաղաքական, տնտեսական, մշակութային մրցակցության մեջ, այլև գիտատեսական հարցերում ծավալվող բանավեճում:

ՀՀ նախագահի ելույթից քիչ անց Ադրբեջանի ռուսալեզու կայքէջերում տեղադրված, իսկ այժմ արդեն առանձին գրքի վերածված և անգլերենի թարգմանվող այս «վերջին գլոխգործոցի» ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հակառակորդի կեղծարարական **աշխատանքների թափը** ակնհայտորեն սկսել է գերազանցել խորը ճգնաժամի մեջ գտնվող հայ պատմագիտության՝ **ճշմարտությունը պաշտպանելու** կարողականությունը: Եվ դա ոչ միայն ֆինանսական հնարավորությունների, այլև պատմական սկզբնաղբյուրների ուսումնասիրության, թարգմանության, համապատասխան հայեցակարգերի մշակման ու մանավանդ՝ պատմությունը քաղաքականության զենք դարձնելու նորագույն հնարանքների առումով: Անցած տասնամյակներում Ադրբեջանում ուսումնասիրվել ու թարգմանվել են Հայոց պատմության գրեթե բոլոր կարևոր սկզբնաղբյուրները և դրանց հիման վրա գրված շատ թե քիչ արժեքավոր աշխատությունները՝ Ստրաբոնից ու Խորենացուց մինչև Մանանդյան, Լեո ու Սուրեն Երենյան<sup>2</sup>: Եվ այն պահին, երբ խորհրդային մտակաղապարները դեռևս լիովին չհաղթահարած Հայաստանի ակադեմիական գիտությունը հիմնականում նախընտրում է նկարագրական ժանրը, Ադրբեջանում ձևավորված հզոր կեղծարարական համակարգը ոչ միայն պատմագիտական **երկրորդ ճակատն** է բացել Հայոց պատմության ու մշակույթի դեմ, այլև տեղեկատվական դաշտում անցել է լայնածավալ հարձակման:

*Այս երկրորդ ճակատի ձևավորման առաջին հանգրվանը կապված էր ԽՍՀՄ*

\* Ընդունվել է տպագրության 10.12. 2010:  
1 Տե՛ս Рамиз Мехтиев, Горис – 2010: сезон театра абсурда, Trend. az, 29.10. 2010.  
2 Տե՛ս Ադրբեջանում պատմագիտական կեղծարարությունների համար օգտագործվող history.az կայքէջի նյութերը:

Բ (Ը) փարի, քիվ 4 (32) հոկտեմբեր-դեկտեմբեր 2010  
վեմ համահայկական հանդես

գոյության շրջանում՝ աղբբեջանական ազգի կազմավորման քաղաքական առաջադրանքի «սպահովման» նպատակով Աղբբեջանին «պարմական անցյալով» օժտելու և կովկասյան թաթարների շուրջ փարածաշրջանի մահմեդական ժողովուրդներին համախմբելու գործընթացի հետ: Աղբբեջանցիներին խորհրդային-ռուսական կողմնորոշում հաղորդելու և նրանց Թուրքիայի ու Իրանի ազդեցությունից զերծ պահելու համար<sup>3</sup> ռուս և հրեա պարմաբանների մեթոդաբանական ցուցումներով սկսվեց Կովկասյան Ալբանիայի (Ադվանքի), Արրպապականի և Մեծ Հայքի արևելյան նահանգների պարմության յուրացումը: Մակայն, Խորհրդային Աղբբեջանի գոյության վերջին փաստանյակներում՝ Հեյդար Ալիևի և պարմաշինարարության գծով նրա «գլխավոր խորհրդական» սկադեմիկոս Ջ. Բունիսթովի ջանքերով պաշտոնական Բաքվի պարմագիտական ասպարակությունները թևակոխեցին իրենց զարգացման **երկրորդ հանգրվանը** և ասպիրանտար խորհրդային քաղաքականության միջոցից վերածվեցին համաթուրանականության գործիքի:

Ուստի՝ Աղբբեջանի անկախացումից հետո նոր թափ ստացած պատմաշինարարության արդյունքում մեր հարևան երկրի «պատմությունը» դարձավ քարե դարից սկսվող, շումերներով, մարերով ու ադվանցիներով շարունակվող և միայն սելջուկների, աղ-կոյունյունների և Սեֆյան Իրանի պատմության յուրացումով ժամանակագրական հաջորդականություն ձեռք բերող մի գույնզգույն տեսաշար: Նրանում որևէ կարևորություն չի տրվում այն հարցին, թե ի՞նչ էթնիկական ծագում ու կազմ է ունեցել պատմության այս կամ այն սուբյեկտը. կարևորն այն է, որ դրան կցվի «աղբբեջանական» ածականը: Ակնհայտ է, որ նման «մեթոդաբանությունը» 1930-ական թվականներից Քեմալ Աթաթուրքի<sup>4</sup> հրահանգների հիման վրա տարածաշրջանի հնագույն ցեղերի ու ժողովուրդների պատմության սեփականումով՝ նրանց անունից «եկվոր հայերի» դեմ ճակատ հարդարելու՝ **թուրքական ցեղապաշտական** հայեցակարգի աղբբեջանական պատճենումն է:

Մակայն, արձանագրելով պատմագիտական **երկրորդ ճակատի** գոյությունը, ինչպես նախկինում, այնպես էլ այսօր հայ պատմագիտությունը զբաղվում է միայն նրա կոնկրետ-փաստագրական աղավաղումները բացահայտելու գործով: Անտեսվում է այն իրողությունը, որ ինչպես թուրքական կեղծարարությունները, այնպես էլ «Աղբբեջանի պատմություն» կոչվող գույնզգույն տեսաշարը իրականում նախատեսված են սոսկ իբրև սովորական **շանթարգելներ** կամ **ծուղակներ**՝ նրանց պատվիրատուների հիմնական գորաշարժը քողարկելու և **բուն խնդիրը** լուծելու համար:

Թուրքական և աղբբեջանական կեղծարարությունների ընդհանուր աշխարհայացքային-փիլիսոփայական հիմքերից բխող «հետազոտական» հնարանքների **խորքային նպատակը թուրք-քոչվորների և ապա Թուրքիայի ու Աղբբեջանի կողմից Հայաստանն ու հայկական քաղաքակրթությունը ոչնչացնելու ասպարեզում ձեռնարկված շուրջ 1000-ամյա ֆիզիկական ջանքերի ցեղասպանական արդյունքները պատմագիտության ասպարեզ տեղափոխելու առաջադրանքն է, որովհետև Հայաստանի գոյության պարագայում իրենք տեղ չունեն տարածաշրջանի պատմության, պատմական աշխարհագրության ու հնագույն մշակույթի մեջ:**

Առ այդ՝ Անատոլիայում թուրքական ազգային պետության ստեղծման փաս-

3 Ավելի մանրամասն տես «Վեմ»-ի ներկա համարում հրապարակվող պրոֆ. Ալեքսանդր Ս. Սմանայանի հոդվածը:

4 Стів Мустафа Кемаль (Ататюрк). Путь новой Турции, М., 1934, т. 4.

տը հիմնավորելու համար 1930-ականներին քեմալականության կողմից առաջադրված թուրքերի **եկվորության** ու **բարբարոսության** խարանները ջնջելով՝ այլոց **հայրենիքներն** ու **մշակույթները** զավթելու քաղաքական առաջադրանքները ամբողջովին տեղափոխվել են արդի ադրբեջանական պատմագրության զինանոց: Արդյունքում՝ տեղի են ունեցել թուրք-ադրբեջանական դերաբաշխումներ՝ **քարտեզագրական առումով** Հայկական լեռնաշխարհի արևմուտքն ու արևելքը համապատասխանաբար՝ Արևելյան Անատոլիայով ու Արևմտյան Ադրբեջանով «լցոնելու», **պատմագիտական առումով** Մեծ Հայքի հաջորդական թագավորությունների և Արևմտյան ու Արևելյան Հայաստանների ինքնուրույն գոյությունը ժխտելու, իսկ **մշակութաբանական առումով**՝ Հայկական քաղաքակրթության անբավ հարստությունը յուրացնելու և փոխարենը՝ հայերին թուրք-ադրբեջանական մշակույթի դաշտ տեղափոխելու, այսինքն՝ «քոչվոր» դարձնելու, ընդհանուր նպատակադրումի իրականացման ասպարեզում: Այս պատմագիտական **երկու ճակատների** հիմնական զենքը լավ մշակված ու հղկված **փոխատեղումների մեթոդաբանությունն** է, ինչը որոշ հայ պատմաբանների անտեղյակության, իսկ հաճախ՝ հակառակորդի նետած խայծը կուլ տալու պատճառով շարունակում է իր ավերածությունները միջազգային ասպարեզում:

**Փոխատեղումների մեթոդաբանությունն իրականացնում է մի կողմից՝ թուրք և հայ, մյուս կողմից՝ ադրբեջանցի և հայ ժողովուրդների պատմական դերակատարությունների փոխարինումը մեկը մյուսով:** Այսինքն՝ **եթե** թուրքերի կամ ադրբեջանցիների նախնիները պատմականորեն եկվորներ ու քոչվորներ են եղել, **սպա** հայերին ևս պետք է դարձնել այդպիսիք, անշուշտ՝ շումերների կամ խեթերի դարաշրջանում, **եթե** թուրքերի կամ ադրբեջանցիների նախնիները դարեր շարունակ եղել են Առաջավոր Ասիայի քաղաքների, քաղաքային մշակույթի ու քաղաքակրթությունների ոչնչացման հիմնական դերակատարները, **սպա** Հայաստանն ու հայերը նույնպես պետք է դառնան հնագույն քաղաքակրթությունների, օրինակ՝ Ուրարտուի (Արարատյան թագավորություն) կամ Կովկասյան Ալբանիայի (Աղվանքի) ոչնչացնողները, **եթե** Հայաստանն է դարեր շարունակ իրականացրել Արևմուտքն ու Արևելքը միմյանց կապող քաղաքակրթական կամրջի դերը, **սպա** պետք է նույն դերը վերագրել «թուրքական քաղաքակրթություն» կոչվող հորինվածքին և պատմական Մետաքսի ճանապարհին, **եթե** քաղաքակրթական ձևերի մեջ ամփոփվող թուրքական մշակույթի մասին կարելի է խոսել 19, իսկ ադրբեջանականի՝ 20-րդ դարից սկսած, **սպա** հայկական մշակույթի ու հայ ազգի ձևավորումը նույնպես պետք է սկսել հենց նշված դարերից՝ կտրելով ժամանակակից հայ ազգի պատմական կապը անտիկ աշխարհի ու միջնադարի Մեծ Հայքի թագավորությունների հետ, և վերջապես՝ **եթե** թուրքերի ու ադրբեջանցիների նախնիները հայ ժողովրդի հանդեպ դաժան կոտորածներ և սպա ցեղասպանություն են իրականացրել, **սպա** անպայման պետք է «ցեղասպաններ» դարձնել հայերին՝ 1905-1906 թթ. հայ-թաթարական կռիվների և 1915-ի ինքնապաշտպանական մարտերի օրերից մինչև Ղարաբաղյան պատերազմ ու Խոջալու:

**Փոխատեղումների մեթոդաբանության** միջոցով այլոց **հայրենիքների** ու **մշակույթների** զավթման թուրքական մեթոդի որդեգրումը Ադրբեջանի հիմնադիր Հեյդար Ալիևի ու նրա որդու կողմից վկայում է Ադրբեջանում **թուրքական ցեղապաշտության (Ֆաշիզմի)** ավանդույթների վերընձյուղման մասին: Հայտնի է, որ մինչ օրս հետազոտողները «**Ֆաշիզմ**» երևույթի առաջին քաղաքական կերպավորումն

են համարում Բ. Մուսոլինիի գլխավորած Իտալիան, որտեղ «հռոմեական ոգու» վերակենդանացման փորձերն իրականացվել են սոսկ նույն տարածքներում բնակված նախնիների պաշտամունքի միջոցով: Մինչդեռ, Թուրքիայում հանգուցյալներին կենդանի մարդկանց ոչնչացման գործիքի վերածելու հնարանքը կիրառվել է ավելի վաղ և ամենակարևորը՝ իր ներկա տարածքների հետ կապ չունեցող նվաճողների՝ Աթիլյաների, Չինգիզ խաների պաշտամունքի միջոցով: Այսինքն՝ **թուրքական ցեղապաշտությունն** ավելի հին է և ավելի ագրեսիվ, քանի որ հիմնվում է ոչ թե հարևանների հանդեպ **գերիշխանության**, այլ նրանց **ոչնչացման ու դուրսաղման** ավանդույթների վրա: Իսկ թուրքական ցեղապաշտության ելակետային դրույթների յուրացման ներկա աղբրեջանական եղանակը ոչ այլ ինչ է, եթե ոչ Արևելյան Հայաստանում ևս Հայոց ցեղապանություն իրականացնելու **Աղբրեջանի պետական ծրագրի** պատմագիտական հիմնավորումը:

Երեկ՝ թուրքական, այսօր՝ աղբրեջանական պատմագրության կողմից գործադրվող **փոխատեղումների մեթոդաբանության** ելակետային դրույթը տարածաշրջանում սեփական «հնագույն ներկայությունը» հորինելն ու Հայկական լեռնաշխարհում և ողջ Առաջավոր Ասիայում դեռևս էնեոլիթի դարաշրջանում<sup>5</sup> իրենց ձևավորումը սկսած քաղաքներն ու նրանցում ստեղծված **քաղաքակրթությունը** ոչնչացնողի խարանից խուսափելն է: Այդ նպատակի իրականացման համար օգտագործվում է գիտական ճանաչողության **վերջնասահմանի բացակայության** հայտնի իրողությունը: Այսինքն՝ միշտ էլ գոյություն է ունեցել և ապագայում էլ գոյություն կունենա որոշակի ժամանակահատվածում մարդկային ճանաչողության հնարավորություններից անդին գտնվող՝ վատ ուսումնասիրված մի պատմաշրջան, որի յուրացումով կարելի է «բավարարել» չկայացած ազգի ու մշակույթի առաջնության մարմաշը: Այսպես՝ հնագիտական նյութի նեցգափոխման միջոցով նեոլիթի դարաշրջանում բնակված ինչ-ինչ «երկարագանգերի» սելխանման գլուխները սեփականելու միջոցով 1930-ականներին թուրքական պատմագրությունը առաջադրել է տարածաշրջանի «հնագույն ցեղերի» թուրանական պատկանելության հորինվածքը: Ավելին՝ **փոխատեղումների մեթոդաբանությունն** այնպիսի առաձգական բնույթ ունի, որ եթե առաջիկայում հիմնվելով գեներտիկայի ընձեռած նոր հնարավորությունների վրա, գիտնականներն ապացուցեն, որ ոչ միայն **նեոլիթյան ցեղերի**, այլև Հայկական լեռնաշխարհում հայտնաբերված **կապկամարդի** գեներում հայերի նախնիների արյունն է հոսել, թուրքերն ու աղբրեջանցիները իրենց հերթին՝ կգտնեն, օրինակ, **դինոզավրի** ոսկորներ և «կապացուցեն», թե դրանք էլ իրենց նախնիների մնացորդներն են, ուրեմն՝ իրենք ավելի հին են, քան կապկամարդը:

Այսպիսով, այն գլուխկոտրուկը, թե ո՞ր «արուն ու էգն» են առաջինը հաստատվել այս կամ այն տարածքում և հետագայում ու՞ր են նրանք անհետացել, գտնվում է մարդկային ճանաչողության **ցանկության ու հնարավորությունների** սահմանագծին, որն իբրև խայծ մատուցելու միջոցով պատմական անցյալ ունեցող հակառակորդին կարելի է դուրս քաշել գիտության դաշտից դեպի քաղաքական աճաբարությունների ոլորտը: Ուստի երբ վերջին տասնամյակներում թուրքական պատմագրությունը զգուշորեն համահարթեցնում է քեմալական հայեցակարգի միակողմանիությունները<sup>6</sup>, որոնք ներկայումս առավել բնորոշ են

5 Տե՛ս Հայկական լեռնաշխարհում քաղաքային մշակույթի ձևավորմանը նվիրված՝ Արտակ Վ. Գնունու հրապարակումը:

6 Տե՛ս Оганесян А. Р., Становление Турецкой республики и выработка «новой исторической концепции»

նոր կազմավորվող աղբբեջանական պատմագրությանը, հետխորհրդային հայ պատմագիտության մեջ, ընդհակառակը, առաջ է գալիս մի յուրահատուկ երկվություն՝ գիտական ճանաչողության վերջնասահմանի բացակայության հայտնի իրողության հանդեպ դիրքորոշվելու հարցում: Պատմաբանների և այլ հայագետների մի մասը շարունակում է առաջնորդվել գիտության դասական (արևմտյան) չափորոշիչներով, այսինքն՝ «այն, ինչ վերջնականապես ապացուցված չէ, ենթակա է կասկածի»: Իսկ մյուս մասը տարվում է ինքնահաստատման խնդիր ունեցող նախկին ԽՍՀՄ-ի նորանկախ երկրներում լայն տարածում գտած հետազոտության մեթոդներով, որոնց միջոցով վերջիններս արդեն հասցրել են «ապացուցել» իրենց ժողովուրդների՝ «Նոյ նահապետից ու շումերներից ծագման փաստը»:

Նման բանավեճը տեղի է ունենում այն պայմաններում, երբ մեր զույգ հարևանները մի կողմից՝ տարածաշրջանի էթնիկ պատմության դեռևս ոչ լիովին ուսումնասիրված շերտի աղավաղումով ձգտում են «ապացուցել» իրենց «հնագույն ներկայությունը», իսկ մյուս կողմից՝ աստիճանաբար անհետացնում ու յուրացնում են Հայոց պատմության անհերքելի վկայությունները հանդիսացող միջնադարյան մշակութային կոթողները: Ժամանակին «աղվանացված» Ջուղայի խաչքարերի «տարօրինակ ոչնչացման» և Անիի ճարտարապետությունը «մշակութային բազմազանության» տիրույթում դիտարկելու փորձերի նպատակը «Հայաստան» և «հայ» հասկացությունների դուրսնումն է տարածաշրջանի պատմության հարուստ մշակութային գունապնակից: Հայկական քաղաքակրթության հանդեպ կյանքի կոչվող փոխատեղումների մեթոդաբանությամբ այն, ինչ հայկական է, նախ՝ մատուցվում է իբրև աղվանական, խեթական, բյուզանդական կամ «խլամական» և ապա՝ յուրացվում է կամ ոչնչացվում: Տարածաշրջանի հայկական քաղաքակրթական ժառանգությունը յուրացնողները հավակնություն են դրսևորում զավթելու նաև դարեր շարունակ Հայաստանի իրականացրած «քաղաքակրթությունների կամրջի» դերակատարությունը՝ փոխատեղումների մեթոդաբանությամբ տեղափոխվելով «Մետաքսի ճանապարհի» և արդիական հնչեղություն ունեցող այլ նախագծերի իրականացման ոլորտը:

Ստացվում է, որ նեոլիթի կամ շումերների ժամանակներից տարածաշրջանում իրենց «հնագույն ներկայության» հորինվածքի միջոցով «հայկական պնդումների» դեմ կառուցելով սովորական ծուղակներ, թուրքերն ու աղբբեջանցիներն իրականում լուծում են բոլորովին այլ խնդիր. ավերում ու յուրացնում են հայկական քաղաքակրթության ներկայումս պահպանվող ռեալ արժեքները և իրենց թալանածը մատուցում ողջ աշխարհին: Այսինքն՝ «ժամանակագրական առաջնության» գործոնն օգտագործվում է իբրև շղարշ՝ հայկական մշակույթի ու քաղաքակրթության բովանդակային յուրացման, պատմական Հայաստանի տեղը գրավելու և Հայաստանի Հանրապետության «բարբարոսներին» տարածաշրջանի քարտեզից ջնջելու համար: Դրանից հետո Հայոց պատմությունը ամբողջովին կներառվի Թուրքիայի ու Աղբբեջանի դասագրքերի մեջ և կմատուցվի որպես սեփական նախնիների «քաղաքակրթական հարուստ ժառանգության» վկայություններից մեկը: Եվ, եթե աշխարհի տարբեր հանրագիտարաններում ու գիտական գրականության մեջ մինչ օրս այս առաջադրանքի իրականացումը իր ավարտին չի հասցվել, դա ոչ թե Հայաստանի պատմաբանների ու մշակութա-

(1920-1930-թ.թ. XX Ե.), «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հատ. 25, Եր., 2006, էջ 104-115:

բանների աննշան դիմադրության, այլ հայագիտության ասպարեզում գործող ավելի հզոր ռազմավարությունների առկայության հետևանքն է:

Այն փաստը, որ անգամ նման պայմաններում հետխորհրդային նորանկախ ազգերին բնորոշ պարզամտությամբ մեր պատմաբանները շարունակում են վիճել հենց ներկա պահին մեզանից խլվող պատմական հարստության չափերի շուրջ, վկայում է հայագիտության ամենակարևոր առարկայի՝ պատմական գիտության ասպարեզում տիրող քառսի մասին: Երկրի անկախացումից հետո անցած շուրջ 20 տարիների ընթացքում Հայաստանում այդպես էլ չի մշակվել շարունակականության ու անընդհատության սկզբունքի վրա հիմնվող՝ Հայոց պատմության որևէ հստակ հայեցակարգ: Մինչդեռ, ի տարբերություն Հայաստանի, Թուրքիայում, իսկ այժմ նաև՝ Ադրբեջանում գիտությունը, կրթությունն ու մշակույթը սեփական շահերից բխող համակարգային ընկալման «միասնական շարքերում» են և այդ «միասնական ճակատն» է գրոհում մեզ վրա և ոչ թե այս կամ այն գիտնականը: Ստացվում է, որ մի կողմից՝ թուրքերի ու ադրբեջանցիների, իսկ մյուս կողմից՝ գերտերությունների՝ Հայաստանի ու հայության հանդեպ ծրագրերն ու մտահղացումները վերածվել են Հայոց պատմության և մշակույթի մասին հստակ հայեցակարգերի՝ տարածվելով ողջ աշխարհում, այդ թվում՝ Հայաստանում, և միայն դրանց շարունակվող մրցակցության շնորհիվ է, որ աշխարհի դասագրքերում ու քարտեզներում դեռևս ինչ-որ տեղեկություններ են պահպանվում մեր մասին:

Ամենևին էլ զարմանալի չէ, որ կոնկրետ պետության քաղաքական ձգտումները կերպավորվում են որպես սեփական պատմության կամ մշակույթի մասին գիտելիքներ և այլոց, այդ թվում նաև՝ հայ ժողովրդի վերաբերյալ գիտական պատկերացումներ: Չարմանալին այն է, որ անկախ Հայաստանի պատմագիտությունն ու մշակութաբանությունը նման հայեցակարգեր չունեն, իսկ Հայաստանում առկա վերը նշված դասական (արևմտյան) և հետխորհրդային կամ «չունեիրական» մոտեցումներն իրականում գերուժերի գաղափարաքաղաքական թափանցումների պարզ պատճենումներն են: Այսինքն՝ չկայացած պետության չկայացած գիտությունը չունի սեփական անցյալի ու նրա արժեքների ընկալման սեփական հայեցակարգը և զբաղված է պարզ փաստագրությամբ կամ այլոց մոտեցումների տարածման գործով, ինչը գումարվելով գիտնականների անձնական հավակնություններին՝ թուրք-ադրբեջանական **գույգ ճակատների** գրոհի պայմաններում վերածվում է ներքին «գիտաքաղաքացիական պատերազմի»:

Մինչդեռ, հայագիտության հանդեպ կիրառվող օտար ռազմավարությունների ուսումնասիրությունն ու դասակարգումը<sup>7</sup> հստակորեն ցույց է տալիս, որ Հայաստանն ու հայությունը գլոբալացող աշխարհում բոլոր հնարավորություններն ունեն սեփական պատմության ու մշակույթի հանդեպ աշխարհի գիտական շրջանակներում բարենպաստ վերաբերմունք ձևավորելու և թուրք-ադրբեջանական ասպատակություններին հակազդելու համար: Բավական է միայն նշել, որ մեր գրեթե բոլոր հին հարևաններն ու գործընկերները ներկայումս կազմում են հայագիտության հանդեպ բարեկամական ռազմավարությունների դաշտը՝ իրանական, արաբական, հունական, ռուսական և այլն (միակ բացառությունը վրացական հայագիտությունն է): Սա վկայում է, որ որպես պատմություն ու մշակույթ,

7 Ավելի մանրամասն տես Գևորգ Խուրդյան, Հայագիտությունը 21-րդ դարում: Մասն երկրորդ: Հայագիտության գործառնությունը ազգային շահերի պաշտպանության համատեքստում, «21-րդ դար», «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հանդես, 2004, N 2 (4), էջ 3-30:

Հայաստանը հանդիսացել է **ամենահաղորդակցական արժեհամակարգի** կրողը՝ քրիստոնեական ու իսլամական քաղաքակրթությունների սահմանագծին, ուստի պատահական չէ, որ եկվորների ձևավորած Թուրքիա ու Ադրբեջան պետությունների «հայագետները» ներկայումս ամեն ինչ անում են մեզ սեփական դաշտից դուրս մղելու և այդ խիստ հարմար տեղը գրավելու համար:

Հայագիտության հանդեպ արժեքային առումով բարեկամական է նաև Արևմտյան Եվրոպայի ռոմանագերմանական երկրների (Ֆրանսիա, Իտալիա և այլն) գիտնականների մեծամասնության տրամադրվածությունը, քանզի նրանք դեռևս անտիկ աշխարհից ու միջնադարից՝ հայ-հռոմեական հարաբերությունների սկզբնավորման, դաշինքի ձևավորման և Կիլիկիայի Հայոց թագավորության ու խաչակիրների համագործակցության դարաշրջաններից, քաղաքական և մշակութային սերտ շփումների մեջ են եղել Հայաստանի հետ:

Անգամ հայագիտության ոլորտում ներկայումս գործող, գլոբալ առումով ամենահզոր անգլոսաքսոնական ռազմավարությունը՝ իր հստակ ամերիկյան կերպարանքով, չի կարելի անվանել ո՛չ բարեկամական և ո՛չ էլ թշնամական, քանի որ այդ ռազմավարությունը հակադրվում է արժեքային առումով իրեն չենթարկվող մնացած ողջ աշխարհին, այդ թվում և մեր հանդեպ թշնամաբար տրամադրված Թուրքիայի ու Ադրբեջանի գիտնականներին:

Այսպիսով կարելի է արձանագրել, որ օտար ռազմավարություններից յուրաքանչյուրը ստեղծել է Հայաստանի իր կերպարը, և գլոբալացող աշխարհում նման «կերպարների մրցավեճը» տեղափոխվել է համաշխարհային բեմահարթակ՝ որպես ազգ-արժեքների պայքարի դրսևորումներից մեկը:

Այս եզրակացությունից ծնունդ են առնում երկու «համառ հարցեր».

**առաջին**, մեր ազդեցիկ հարևաններին «խաղից դուրս» թողնելու համար ինքնամեկուսացման կամ օտար ազդեցությունները պարզունակորեն պատճենելու «մեթոդներն» են ճիշտ, թե՞ սեփական հայեցակարգի միջոցով փոխգործակցության ուղղակի և միջնորդավորված եղանակների կիրառումը այն ռազմավարությունների հանդեպ, որոնք, իբրև արտաքին ազդեցության ազդակներ, վաղուց արդեն թափանցել են Հայաստան,

**երկրորդ**, կարո՞ղ է արդյոք Հայոց պատմության ու մշակույթի հայկական սպազա հայեցակարգը շրջանցել հայաստանյան հայագետներին գրեթե անհայտ այն առեղի պատմափիլիսոփայական (իստորիոսոփիական) հարստությունը, որը մարքսիզմի ձևավորումից մինչև մեր օրերը՝ շուրջ 1,5 դար, ստեղծել են դասական (արևմտյան) պատմագիտությունը, փիլիսոփայությունն ու քաղաքագիտական միտքը և հավակնել գիտական հայեցակարգ ունենալու և աշխարհի կողմից ճանաչվելու պատվին:

Այս երկու հարցերին հստակ և ամենակարևորը՝ գործնական պատասխաններ տալուց հետո միայն համագործակցության զուգահեռ դաշտերի ձևավորումը օտար, բայց բարեկամական հայագիտական դպրոցների հետ, թույլ կտա դրանց **ազգային միակողմանիության** համադրումով առաջ տանել սեփական ճշմարտությունը, այսինքն՝

ա) բացահայտել Հայաստանի ու հայության ուրույն դերակատարությունը միասնական՝ հույն-ուղղափառ-սլավոնական քաղաքակրթական տարածության մեջ,

բ) հին արևելքի մշակութային ժառանգության հիմքի վրա ձևավորել նրա բնիկ ժողովուրդների քաղաքակրթական ընդհանրությունների ուսումնասիրության՝

հայ-իրանական և հայ-արաբական գործելադաշտերը,

զ) լայնորեն տեղավորվել Հայաստանի՝ որպես քրիստոնեության ու եվրոպական քաղաքակրթության արևելյան պատվարի ընկալման վրա հիմնված՝ մայրցամաքային Եվրոպայի ռոմանական և գերմանական երկրների գիտական շրջանակների և նրանց միջոցով՝ ողջ Արևմուտքի ընկալումների դաշտում:

Մրանցից յուրաքանչյուրը ներկայացնող հայագետներն արդեն ստեղծել են Հայաստանի ու հայության իրենց կերպարները, որոնց գումարը ամբողջովին «ծածկում» է մեր պատմության ու մշակույթի թուրք-ադրբեջանական ասպատակների գործելադաշտը: Նրանց կողմից Հայաստանն ու հայությունն ընկալվում են միաժամանակ որպես հնդեվրոպական լեզվաընտանիքի, Արևմուտքի ու Արևելքի արժեհամակարգերը համադրող ուրույն մշակույթի ներկայացուցիչներ, և անշուշտ՝ եվրոպական քաղաքակրթության տարածաշրջանային հենակետեր: Այսինքն՝ օտար ընկալումների այս հանրագումարում Հայաստանը դառնում է այն գրեթե բոլոր հիմնական քաղաքակրթական ավանդույթների կրողը, որոնք ստեղծվել են մեր տարածաշրջանում: **Ուրեմն՝ գիտական շփումների կտրուկ ընդլայնման ու համագործակցության զուգահեռ դաշտերի ձևավորման միջոցով է միայն հնարավոր գլոբալ մակարդակի վրա ստեղծել Հայաստանի այնպիսի ընկալում, որը կարող է փակել թուրք-ադրբեջանական փոխատեղումների մեթոդաբանության ճանապարհը և չեզոքացնել նրա նպատակը՝ Հայաստանի ոչնչացումը որպես պատմություն ու մշակույթ:**

Մեփական հայեցակարգն ունենալու, բայց միաժամանակ՝ յուրաքանչյուր առանձին գործելադաշտում մեր տեսակետներն առաջ տանելու միջոցով կարելի է տարանջատվել նույնականացմամբ՝ յուրացման խնդիր հետապնդող թուրք-ադրբեջանական փոխատեղումների մեթոդաբանությունից և իրականացնել Հայոց պատմության ու մշակույթի պատմահամեմատական հետազոտությունը՝ արևմտաեվրոպական, ուղղափառ, արաբական ու իրանական քաղաքակրթությունների շփումն ապահովող խաչմերուկի համաշխարհային-պատմական գործառույթների բարձրությունից:

**Հայաստանի, որպես համաշխարհային պատմության սուբյեկտի, դերակատարության բացահայտման առաջադրանքը ներկայումս պահանջում է հնագույն հնդեվրոպացիների (նախնադար), հելլենիզմի արժեհամակարգի (անտիկ շրջան), վաղ և գարգացած քրիստոնեական մշակույթի (միջնադար), եվրոպական լուսավորականության գաղափարախոսության (նոր ժամանակներ) և վերջապես՝ արդիականության հետ ինտենսիվ շփումների ու փոխազդեցությունների համատեքստում հայկական քաղաքակրթության տարածաշրջանային գործառույթների համակողմանի ուսումնասիրությունը<sup>8</sup>:**

*Խմբ.:*

## ROTATION METHODOLOGY

Editorial

8 Թուրք-ադրբեջանական կեղծարարությունների վերաբերյալ «Վեմ» հանդեսի ներկա համարում հրապարակվող ուսումնասիրությունների առաջնահերթության պատճառով թիվ 3-ի «Պատմություն» և «Գրականագիտություն» բաժիններում տեղ գտած հաջորդական հոդվածաշարերը շարունակվելու են 2010 թ. առաջին համարում: Խմբ.: